


ՄԵՅԵՐՁՈՆ

ԳՅՈՒՂԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՅԵՎ

ԿԱՆԱՅՑ ՄԵԶ ԿԱՏԱՐՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ԿՈՒՍԿՐԱՏ
1933 ՅԵՐԵՎԱՆ



28 JUN 2013

29965

338.1

Մ-60

17 FEB 2010

ԳՅՈՒՂԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԵԶ
ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՔՍ.ԲՏՈՒՂԱՐ ԸՆԿ. ՄԵՅԵՐՁՈՆԻ ՃԱՌԸ ԿԱՆԱՆՑ
ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՎԻՐՎԱԾ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընկերներ, մենք այժմ ավարտում ենք գարնանացանը, յերկ-
րորդ հնգամյակի առաջին գարնանացանը։ Այդ գարնանացանի
հիմնական աշխատանքը, այն արդյունքը, վոր վողերում և մեզ
մարտական խանդավառությամբ, կոլտնտեսական կարգերի լիա-
կատար հաղթանակն և Խորհրդային Միության մեջ։

Գյուղում մեր կատարած աշխատանքի վերջին յերեք տարի-
ները հանդիսանում եյին կուլակության վերացման և կոլտնտե-
սությունների հաղթանակի համար մղվող լարված պայքարի տա-
րիներ։ Մենք հաղթահարեցինք կուլակության կատաղի դիմա-
դրությունը՝ աշխատավոր գյուղացիների կոլտնտեսական շարժ-
մանը։ Մենք դուրս գցեցինք կուլակին նրա արտադրական դիր-
քերից, զրկեցինք նրան գյուղում նրա ունեցած նախկին ազգե-
ցությունից։ Արդյունքը յեղավ այն, վոր մենք կարողացանք
ջախջախել գյուղի մեր զասակարգային թշնամիների ուժերը։

Յեկ այժմ մենք կարող ենք լիակատար իրավունքով արձա-
նագրել վոր անհատական տնտեսության գիրքերն
արգեն հաղթահարված են Միության բոլոր հիմ-
նական շրջաններում և վոր կոլտնտեսական շար-
ժումը հաստատապես ամրացել և Առ հրդային
յերկում։

Այդ ամենը նոր պայմաններ և ստեղծում գյուղում և ան-
հրաժեշտ և զարձնում անցնել աշխատանքի նոր մե-



Արքագրի Ա. Տ. Միքայելյան
Հանձնված է արքագրության 17 հունիսի 1933 թ.
Սուրագրված է սպագրելու 20 հունիսի 1933 թ.
Հրամ. № 115, Տիրամ 1000, Գլավլիս № 7749 (թ.)
Կոլուսարք տպաքան, Փասվեր № 2, 37,000 առ. Ա. Յ.

թողների: Նախ և առաջ անհրաժեշտ ե բարեփոխել կուլակի դեմ մեր մղած պայքարի մեթոդները: Միանգամայն սխալ կլիներ, յեթե կարծեցինք, թե զյուղում սկսել ե թուլանալ դասակարգային պայքարը: Ընդհակառակը: Մենք պետք ե մեղլիակատար հաշվի տանք, վոր տվյալ պահին կոլտնտեսական կարգերի հաղթանակն անխուսափելիորեն սրում ե դասակարգային պայքարը զյուղում: Կուլակը տեսնելով կոլտնտեսությունների հաղթանակը, զգալով, վոր իրոք վրա յե հասնում իր վերջին որերը, հուսահատությունից դիմելու յե ամենասուր ձեւվերի Խորհրդային իշխանության դեմ մղվող պայքարում: Ուստի վոչ մի բարեհոգություն մեր կողմից, վոչ մի հանգստացում: Բոտ ամենայնի ուժեղացնել աչաւը ջությունը, ամեն կերպ ուժեղացնել կուլակի դեմ մղվող պայքարը — ահա թե նախ և առաջ ինչ են պահանջում մեղնից զյուղի նոր պայմանները:

Սակայն չի կարելի զյուղի նոր պայմաններում ուժեղացնել կուլակի դեմ մղվող պայքարը, չի կարելի ուժեղացնել պայքարը աշխատանքի հին մեթոդներով, վորովհետև դրանք, աշխատանքի այդ մեթոդները, ապրել են իրենց դարը: Պետք ե բարեփոխել պայքարի հին յեղանակները, պետք ե ավելի մեծ կազմակերպվածություն մացնել կուլակի դեմ մղվող պայքարում: Մեր ակտիվ ու անհաշտ թշնամիների նկատմամբ շարունակելով գործադրել այն բոլոր անողոք միջոցները, վոր նըանք մեզ հարկադրում են գործադրել, մենք պետք ե ծանրության կենտրոնը վորոն կամ մեջության կենտրոնը ամենա լավագույն աշխատողները: Նույնական աշխատավետ ու հիմնավորապես են ստուգվելու և ընտրվելու ՄՏԿ-ների ու խորհանտեսությունների տնտեսական կադրերը: Անհրաժեշտ ե շարունակել ել ավելի ամրացնել կուսակցության ու խորդային կազմելը զյուղում՝ մինչև կոլտնտեսական ստորին կազմելը և այլն: Յեզ այն ժամանակ մենք ամենամուտ ժամանակում կրաքարացնենք Անդրկովկասի զյուղում կատարվող քաղաքական ու կազմակերպչական աշխատանքը, հասցնենք այնպիսի բարձրության, վոր պահանջում են նոր պայմանները:

Խորհրդային Միության մեջ զյուղում ստեղծված նոր պայմանները նոր ձեռվ են դնում կուլակիվացման խնդիրները: Այժմ հարցն այն չե, վոր մենք պաշտպանենք անտեսության կոլեկտիվ ձեր անտեսության անհատական ձեր դեմ մղվող պայքարում: Այդ խնդիրը հաջողությամբ ե լուծվել Խորհրդային Միության մեջ: Այժմ մեր խնդիրն ե ընդառաջել կոլտնտեսությունների մեջ մտնելու այն հարածուն ձգառմին, վորը ցուցաբերում են մենատնտես աշխատավոր զյուղացիները, ոգնել նըանց մտնելու կոլտնտեսությունները: Այդ խնդիրը և զրգած ե մեզ մոտ Անդրկովկասում ամենասուր կերպով: Մեզ մոտ զյուղացիական անտեսությունների համարյա յերկու յերրորդը դեռ կոլտնտեսությունից գուրս և գտնվում: Մի շաբաթ շրջաններում գարնանացանի ընթացքում զգալի հոսանք և ստեղծվել դեպի կոլտնտեսությունները, այդ շաբաթան ավելի մեծ կազմակերպվածություն տալու, ինքնահոսի դեմ պայքարելու հարցերը, այդ շաբաթում գլ

նակ՝ Աղրբեկանում ցանքի կամպանիայի ընթացքում պետք յեղավի հեռացնել և մասամբ դատի տալ 12—15 շրջանների ղեկավարությանը: Այդ աստիճան անուշաղվիր եր թողնված քաղմասայական աշխատանքը հիշյալ շրջանների այն ամրացումը, վոր զյուղի բերինք մենք ցանքի կամպանիայի նախապատրաստման և հենց գարնանացանի ընթացքում, մենք պետք ե դիտենք վորպես լոկ այդ ուղղությամբ կատարվելիք հետագա հսկայական աշխատանքի սկիզբը: Հենց այդպես և նայում այժմ Անդրյերկոմը գյուղի աշխատանքի հարցերին: Բայց կիյան ամրակուռ բաղուկով Անդրյերկոմը հանրապետական կենտրոնների հետ միասին կազմակերպում ե ՄՏԿ-ներում ու խորհանտեսություններում քաղաքինները, ամենայն խստությամբ ընտրելով այդ որգանների համար լավագույն աշխատողները: Նույնական աշխատավետ ու հիմնավորապես ու հիմնավորապես են ստուգվելու և ընտրվելու ՄՏԿ-ների ու խորհանտեսությունների տնտեսական կադրերը: Անհրաժեշտ ե շարունակել ել ավելի ամրացնել կուսակցության ու խորդային կազմելը զյուղում՝ մինչև կոլտնտեսական ստորին կազմելը և այլն: Յեզ այն ժամանակ մենք ամենա լավագույն անտեսության կուլեկտիվ ձեր անհատական ձգառմին, վորը ցուցաբերում են մենատնտես աշխատավոր զյուղացիները, ոգնել նըանց մտնելու կոլտնտեսությունները: Այդ խնդիրը և զրգած ե մեզ մոտ Անդրկովկասում ամենասուր կերպով: Մեզ մոտ զյուղացիական անտեսությունների համարյա յերկու յերրորդը դեռ կոլտնտեսությունից գուրս և գտնվում: Մի շաբաթ շրջաններում գարնանացանի ընթացքում զգալի հոսանք և ստեղծվել դեպի կոլտնտեսությունները, այդ շաբաթան ավելի մեծ կազմակերպվածություն տալու, ինքնահոսի դեմ պայքարելու հարցերը, այդ շաբաթում գլ

վորելու հարցը պետք եղանակ Անդրկովկասի կոլտնտեսական շինարարության պրակտիկայի կարևորագույն հարցերից մեկը:

Դյուլի այդ նոր պայմաններն ապահովում են գյուղատնտեսության վրակական վերափոխման աշխատանքի հսկայական վերելքը: Գյուղատնտեսական արտադրության բերքատվությունը, արդյունավետությունը և ապրանքայնությունը վճռաբար բարձրացնելու ճանապարհին մենք կկարողանանք իրագործել ընկ. Ստալինի հետևյալ մեծ լողունզը՝ «Մոտակա յերկույթերեք տարում բոլոր կոլտնտեսականներին ունեու դարձնել»: Մենք Անդրկովկասում արդեն ընթացիկ 1933 թվականին վիթխարի խնդիրներ ենք առաջարկում այդ բնագավառում: Մենք ծրագրել ենք մեր մշակույթական բերքատվությունը բարձրացնել միջին հաշվով տարեկան 25—40 տոկոսով, վորը 2—3 անդամ գերազանցում և Միության միջին տվյալներից:

Ընկերներ, գյուղի նոր պայմաննելը և գյուղում կատարվող աշխատանքի նոր խնդիրները նոր ձևով են դնում նաև կանանց մեջ կատարվող աշխատանքի հարցերը: Այդ աշխատանքն այժմ հատուկ, բացառիկ նշանակություն եւ ստանում: Մեզնից ամեն մեկը պետք եւ աչքի առաջ ունենա ընկ. Ստալինի հետևյալ խորհրդ՝ «Կանանց մեջ կատարվող աշխատանքի թերագումը սխալ եւ, լուրջ սխալ»: Հերավի, կարող ենք միթե անհրաժեշտ բարձրության հասցնել գյուղում կատարվող քաղաքական ու կազմակերպչական աշխատանքները, կարող ենք միթե մորիլիզացիայի յենթարկել աշխատավոր գյուղացիության ամբողջ մասսային կուլակի դեմ պայքարելու համար, յեթե մենք թերագնահատենք և անտեսենք աշխատավոր մասսայի կեսը կազմով կանանց մեջ կատարվելիք աշխատանքը: Միթե կարելի յեղիսամուրել և կազմակերպված բնույթ տալ մենատեսների ձգտմանը գեղի կողանտեսությունները, յեթե մենք չընդգրկենք մեր աղդեցությամբ կանանց, վորոնք շատ մեծ նշանակություն ունեն գյուղացիական տնտեսության մեջ: Կարելի յեթե ներկայումս իսկական պայքար ծավալել բերքատվության ու արդյունավետության համար, յեթե մենք աշխատանք չկազմակերպենք կանանց մեջ, վորոնք վճռական դեր են խաղում գյուղատնտեսական արտադրության մի շարք կարևորագույն բնագավառներում (բամբակի, ծխախոտի, թեյի մշակումը, բանջարանցային մշակույթները, անասուններ կթելը, թոչնաբուծություն,

շերամապահություն և այլն): Կատարելապես պարզ ե, վոր յեթե մենք բայց ինչելու ձեռնամուխ չինչենք կանանց շրջանում աշխատանք կատարելու, ապա այդ խնդիրների իրականացումը չափազանց կդանդաղի և կապված կլինի մի շարք գծվարությունների հետ: Միանգամայն պարզ է, վոր կանանց մեջ կատարվող աշխատանքի թերագնահատումը մեր կողմից միմիշայն կնպաստի կուլակի փորձերին՝ հենարան ինտուելու գեղջկուհիների հետամնաց մասի մեջ, կնպաստի նրանց փորձերին՝ դարձնելու կանանց այդ հետամնաց մասը վորպես գործիք՝ խորհրդային ու կորոնտեսական կարգերի դեմ իր մղած պայքարում:

Այս բոլորը հարկադրում են մեզ սուր կերպով դնել կանանց մեջ մեր կատարած աշխատանքի թերագնահատման բոլոր տարբերն արմատախիլ անելու հարցը: Ժամանակն են վերջ տալ այդ ամենալուրջ սխալին: Նախ և առաջ պետք եւ վերացնել այն դրությունը, վոր տեղաւորել «կանանց շրջանում աշխատանք են կատարում միմիշայն կանայք», վոր այդ աշխատանքում մի շարք դեպքերում ուժապատ են լինում միմիշայն կանանց սեկտորները, կուսուրգաններն ամբողջովին վերցրած՝ ըստ եյության մի կողմն են քաշվում: Ժամանակ են, վոր բոլոր կուսուր գան եր ը՝ սկսած Անդրյերկոմից մինչև քջի ջները, ժամանակ են, վոր բոլոր կոմունիստները ձեռնամուխ լինեն այդ գործին: Այս ժամանակ մենք արագորեն կհասցնենք այդ բարձրության, վոր պահանջում են գյուղի նոր պայմանները:

* * *

Ի՞նչն ե ամենից ավելի ցայտուն կերպով գրսնորում կանանց մեջ կատարվող աշխատանքի թերագնահատումը: Այսեղ վեր թշնամիների վրա պետք ե ամենալուրջ կրակը բանալ:

1. Պետք ե վերացնել հասարակության մեջ կնոջ աղջական գուշ միացն բացականական թագնված սքողված տարբերը: Միթե, որինակ՝ կարելի յեղիսամուրել վոր Ադրբեյջանի նույնիսկ առաջավոր շրջաններից մեկում՝ Կարյագինի շրջանում, միքանի գյուղերում կանանց աշխատանքն արտադրական մինչույն նորմաների պայմաններում 25—30 տոկոսով պակաս և վաճարվում, քան տղամարդկանցը: Անդրկովկասի առանձին շրջաններում աշ-

խորը գրացնվում և միմիայն ամուսնու աշխարքույկում, կնոջ վրա
նայում են վորպես մի տեսակ «ոժանդակ» ուժի վրա:

Կամ վերցնք աշխատանքի տեսակների հարցը դյուզում: Մի
շարք ամենաղեղվարին աշխատանքներ (բամբակը, թեյը ձեռքով
հավաքելը, ծխախոտ ետելը, քաղհանը և տնկելը, շերամի վորդի-
րի կերակրելը և այլն) հիմնականում համարվում են կանանց հա-
տուկ աշխատանք, տղամարդն անպատճարեր ե համարում իր հա-
մար մասնակցել այդ աշխատանքներին: Յեվ ընդհակառակը. մի
շարք վորակյալ աշխատանքների կանանց փաստորեն թույլ չեն
տալիս մասնակցել: Բավականաշափ բնորոշեց այն, վոր տրակ-
տորիստների մեջ մեղ մոտ կանայք կազմում են ընդամենը մի
տոկոս, միայն մի տոկոս: Այդպիսի շատ որինակներ կարելի յերե-
բել: Դրանք բոլորն ել ցույց են տալիս, վոր տեղատեղ այս կատ
այն չափով մինչև այժմ ել պահպանվել ե կանանց ճնշված վիճակն
արտադրության մեջ:

Ժամանակն ե արմատապես վերջ տալ դրան ընդմիշտ: Այդ
դեպքում չպետք ե պատճառաբանել «պայմաններով և տրադի-
ցիաներով», «դարավոր հետամնացությամբ» և այլն: Զե՞ վոր մի
շարք առաջապոր շրջաններ կարողացան հաղթահարել այդ անի-
ծյալ տրադիցիաները: Այդ շրջաններին պետք ե հավասարվեն
մյուս բոլոր շրջանները և ջարդ ու փշուր անեն վերջապես ծանր
անցյալի այդ մնացորդները:

2. Պետք ե արմատապես վերացնել կանանց ա-
ռաջքաշումը դանդաղեցնելու պրակտիկան և հա-
մարձակորեն դեկավար աշխատանքի դնել լավա-
գույն առաջապոր աշխատող կոլտնտեսուհիներին
ու գեղջկուհիներին:

Կարելի յերազմաթիվ ամենազայրացուցիչ դեպքեր մատնա-
նշելու համար դանդաղեցվել ե կանանց առաջքաշումը: Ահա, որի-
նակ՝ Ալիքայը մլու շրջանը: Այդպեսի կոլտնտեսություն-
ներում աշխատունակ կանայք կազմում են 48—50 տոկոս: Նրանց
մեջ շատ կան հիանալի հարվածայիններ, վորոնք ցույց են տվել
աշխատանքային հերոսության որինակներ: Միևնույն ժամանակ
կոլտնտեսությունների 66 նախագահների մեջ վոչ մի կին չկա:
նույնիսկ 2345 բրիգադիների մեջ չկա վոչ մի կոլտնտեսուհի:
Համարելի շրջանի (Հայաստան) բեղդազլու գյուղում կոլ-
տնտեսական բջիջի քարտուղարը զարմացած հայտարարեց, թե

«մեզ յերբեք վոչ վոք չի ասել, վոր կանանց պետք ե ներկրավել
բրիգադիների կազմի մեջ», իսկ այդ կոլտնտեսության նախագահն
ավելացրեց, թե «թեպետ մեզ մոտ կան պատգամավորուհի հար-
վածայիններ, վորոնց կարելի յեր առաջ քաշել վորպես բրիգա-
դիր, սակայն յես կարծում եմ, վոր կանայք չեն կարող բրիգա-
դիր լինել»: Կամ ահա Խոնի շրջանում (Վրաստան) հետա-
զույթած հինգ կոլտնտեսություններից վոչ մեկում կին չկար զե-
կավար աշխատանքում (վարչության անդամներ, բրիգադիներ):
Միքանի շրջաններում (Գյանջայի, Աղդաշի, Կասում-Իղմայիլու-
վի և այլ շրջաններում) բանն այստեղ ե հասել, վոր կազմակերպ-
վել են հատուկ կանանց բրիգադներ, բայց զեկավարներ են նշա-
նակվել տղամարդ բրիգադիներ: Աղաղակող այլանդակությունն:
Մենք կարծես գործ ունենք «յերկրորդ տեսակի» մարդկանց հետ:

Ժամանակ ե ջարդ ու փշուր անել այդպիսի պրակտիկան և
սկսել լայնորեն առաջ քաշել կանանց հարածուն ակտիվը: Ժա-
մանակ ե բարձրացնել բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին
դեկավար աշխատանքի և կոլտնտեսության մեջ, և խորհրդում,
և բժիշում, և շրջանում, և հանրապետական ու յերկրային որ-
դանում: Ով չի հասկանում դրա ամբողջ անհրաժեշտությունը,
ով չի տեսնում կանանց աշխատավոր մասսայի քաղաքական ու
արտադրական ակտիվության հսկայական աճումը, ով չի գիտակ-
ցում, վոր «կանայք վազուց արգեն հետամնացներից
անցել են առաջարկություն շաբաթը» (Ստալին), նա
կույր ե և կարճատես, նա իր թիկունքն է դարձել այսորվա մեծ
իրականությանը, նա ապրում է պատմական հեռավոր անցյալի
հուշերով և պատկերացումներով:

3. Պետք ե հսկայական չափով բարձրացնել կա-
նանց մեջ կատարվող կուլտուրական աշխատանքը
և լայն ծավալուն պայքար մղել բանվորուհիներից
ու գեղջկուհիների հետամնացությունն արմատա-
պես վերացնելու համար:

Կանանց մասսայի միքանի խավերի կոլտուրական հետա-
մնացության փաստից մենք, բարձրակիներս, պետք ե անենք այն
յեղակացությունը, թե անհրաժեշտ ե զարկ տալ աշխատանքի
այդ ճակատամասին, առաջ մղել այդ բնագավառը: Այդպես,
միմիայն այդպես պետք ե դնենք մենք հարցը: Մինչեւո՛ մինչև
այժմ ելտեղատեղ հետ ե մնում, թույլ ե այդ աշխատանքը: Վերց-

բեք, որինակ, անզրագիտության վերացումը։ Անդրկովկասում անզրագետների ընդհանուր թվի մինչև յերեք քառորդ մասը կազմում են կանայք։ Միևնույն ժամանակ լիկայաններում նրանք կազմում են ընդամենը 35 տոկոս։ Կանանց աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործի համդեալ մեր ուշադրության թույլ լինեն ավելի ցայտուն կերպով յերեան ե գալիս ագրոտեխնիկական պրոպագանդի հացերում։ Ինչպես հայտնի յե, գեղջկուհին պատասխանատու գերեխագում Անդրկովկասի գյուղատնտեսության մի շարք կարեռագույն ճյուղերում (բամբակ, թեյ, ծխախոտ, շերամապահություն, անասնաբուծություն)։ Նրա ագրոտեխնիկական գիտելիքների մակարդակը մեծ չե, և այդ մակարդակի բարձրացումը բնականաբար կենսական կարեռություն ունի գյուղատնտեսությունը բարձրացնելու համար։ Մինչդեռ ամեն մի քայլափոխում արհամարհանք և նկատվում դեպի այդ գործը։ Բավականաչափ բնուրոշ է, վոր բնավ չի կատարվել Անդրյերկոմի այն գիրեկափիվը, վորն առաջարկում ե մասսայական փորակափորման կազրերի վերապատրաստման դասընթացների մեջ առնվազն 25—30 տոկոսով ներդրագիր կանանց։ Առանձին շրջաններում այդ դասընթացների կազմում մենք ունինք 1-ից մինչև 3—4 տոկոս կին, այն ել գործը կատարվել ե անկազմակերպ, պատահականորեն, առանց կուսորդագների համապատասխան ուշադրության։

Այս բոլոր փաստերն ու որինակները ցույց են տալիս, վոր տեղերում մինչև այժմ ել պահպանվում են կանանց հանդեալ ցուցաբերվող հին արհամարհական վերաբերմունքի տարրերը, ճիշտ ե՝ նոր տարագով, նոր ցուցանակներով։ Անհրաժեշտ ե մերկացնել այդ բոլոր ննացորդները, լույս աշխարհ հանել և վերջնականապես հաղթահարել գրանք։ Անդրկովկասի ամբողջ կուսկազմակերպությունը պետք է առաջարի այդ գործը՝ վորպես աշխատանքի մուտքակա շնչանի մարտական խնդիրներից մեկը։

* * *

Ընկերներ, այժմ մենք ամենալարված կերպով անց ենք կացնում ցանքերի մշակումն ու քաղճանը։ Այդ կամպանիայի ընթացքում պետք է ձգտել առավելագույն չափով ընդգրկել գեղջկուհիներին մեր բայլշերկայան ազգեցության տակ, անհրաժեշտ ե այդ կամպանիայի ընթացքում սկսել բարձրացնել կանանց մեջ

կատարվող աշխատանքն այն բարձրության, վորը պահանջվում է այժմ։ Պետք ե հատուկ ուշադրություն նվիրել հետևյալ խընդիրներին։

ա) Պետք ե կոլտնտեսուհիների և աշխատավոր մենատնտեսուհիների ամբողջ մասսային պայմանագրի ներկայակի ու յենթակուլակի դեմ, պայքարի ներդրագիր լրդրի դեմ, սպեկուլյանտի և պետական ու հանրային սեփականությունը հափշտակողի դեմ։ Այս բոլոր տարրերը միշտ աշխատում են ճանապարհ գտնել, իրենց համար ճանապարհ հարթել առանձնապես գեալի կանանց մասսայի նետամաց խավերը։ Ժամանակն ե վերացնել նրանց այդ սովորությունը և աշխատավոր կանանց ցույց տալ այդ չարամիտ տարրերի խսկական դեմքը։ Առանձնապես պետք ե մերկացնել դասակարգացին թշնամու գործակալ կանանց, վորոնք փորձում են գտնել կանանց մասսային մոտ ու հասկանալի լրդրերը՝ «կանանց ծանր ճակատագրի» հարցը և այն։ Պետք ե ցուց տալ մասսաներին դասակարգացին թշնամու չարանենու դեմքը՝ այդ հեզ ու խոնարհ դիմակի տակ։

թէ՛ վորքան սուր պետք ե լինի մեր աչալըջությունը կանանց մեջ կատարվող աշխատանքի ճակատի նկատմամբ, ցույց ե տալիս այն փաստը, վոր նույնիսկ պատղամավորուհիների ժողովներում հաճախ մենք հանդիպում ենք դասակարգացին թշնամու գործակաների խմբակներին։ Որինակ՝ Բաշկիչ է թիւ շանի (Վրաստան) յերեք գյուղերում պատղամավորական ժողովների կազմում կար 11 կուլակուհի։ Աղդամի 2 ըանի Խարաբադ գյուղում պատղամավորների ժողովի կազմում կար 12 կուլակուհի և արտաքամած ձայնագուրիների կանայք։ Աղդամի 2 ըանի կարաղը, Խարաբադին, Խալդան և Խավարլու գյուղերում 87 պատղամավորուհիներից 20 հոգի կուլակուհիներ, յենթակուլակուհիներ և ձայնաղուրկների կանայք ենին։ Առաջելադույն հեղափոխականի մեր պատասխանը նման փաստերին։

բ) Պետք ե կոլտնտեսուհիների ամբողջ մասսային ներկայականությունը կուտնտեսությունների համար մղվող պայա լրդրին, այնպիսի կոլտնտեսությունների համար, վորտեղ ամուր և աշխատանքային կարգապահությունը, ամուր և մշտական լրդրիկը, բարձր և աշխա-

տանքի վորակը, վորտեղ կատարվում ու գերակատարվում են քսնակական ու վորակական բոլոր առաջադրանքները, ճշտիլ ու կանոնավոր կատարվում են պորտետարական պետության հանգեցի ստանձնած բոլոր պարտավորությունները և միևնույն ժամանակ ավելանում ե կոլտնտեսականի յեկամուռը: Կոլտնտեսուհին պետք ե ակտիվ կերպով մասնակցի այդ բոլոր հարցերի լուծմանը և պետք ե որինակ ցույց տա բարեխղճության, աշխատանքում ցուցաբերվող համառության, դիտակից վերտրեցմանքի դեպի աշխատանքը: Առաջակոր կոլտնտեսուհին պետք է լինի կոլտնտեսական ակտիվի լույսույն մասը: Նա, վորպես կանոն, պետք ե որինակելի հարվածային լինի և կոլտնտեսության մեջ իր հետ տանի բոլոր հետ մնացողներին:

Հատկապես այդ հարցերն են, վոր կանանց պատղամավորական ժողովները, հավաքները և խորհրդակցությունները պետք ե իրենց աշխատանքի կենտրոնը դարձնեն՝ ամբողջ կոնկրետությամբ զանազան շրջանների կոլտնտեսությունների համար: Յեկ պետք ե միջոցներ գոտել, վոր այդ աշխատանքը չսահմանափակվի կանանց ակտիվի նեղ շրջանակներում: Մեր ազդեցությունը պետք ե հասցնել կանանց մասսայի մինչև ամենաստորին խավերը: Ամեն մի ակտիվիստ կին դրա վրա պետք ե աշխատի այսոր գետ հետամնաց խավերի վորոշ խմբակներում, պետք ե զարթեցնի նրանց ակտիվությունը, բարձրացնի նրանց քաղաքական ու կոլտուրական մակարդակը, ներգրավի նրանց բայլշեկայան կոլտնտեսության համար մղվող պայքարին:

Միաժամանակ պետք ե լայն աշխատանք ծավալել նաև մենատնտեսուհիների, վաղվա այդ կոլտնտեսուհիների մեջ: Նրանց պետք ե սերտորեն լծել բայլշեկայան կոլտնտեսությունների համար մղվող ամբողջ պայքարին և այդպիսով նեշտացնել նրանց անցումը կոլտնտեսական կյանքին:

գ) Հսկայական աշխատանք պետք ե կատարել կանանց մեջ ագրոտեխնիկան պլրոպագանդ մըզ մըզ գելու համար: Մշակման կամպանիայի բոլոր ետապները՝ նորացումը, քաղանքը, վնասատուների դեմ մղվող պայքարը, վոռոգումը և այլն, այդ ետապներից յուրաքանչյուրին աղբոտեխնիկայի ներկայացրած բոլոր պահանջները պետք ե ուշի ուշով քննարկել պատգամավորական ժողովներում, հաշտուկ խմբակներում ու խորհրդակցություններում: Յեկ պետք ե

աշխատանքի հին, պապենական յեղանակներից տանել կանանց դեպի նոր, գիտության ու տեխնիկայի ավանդների վրա կառուցված յեղանակները (բամբակի յերկու նորացման ճշշտ կատարումը, ժամանակին մշակելը, խնամքով վերաբերվելը ջրին ու նրա սացիոնալ ոգտագործումը, ակոսային վոռոգումը և այլն):

դ) Պետք ե մեծ ուշադրություն նվիրել կուտանս պատեսավագության մեջ աշխատավոր մենատնտեսուհու կենցագային հարցերին՝ մանկական հրապարակները, հանրային սնունդը, մալարիայի գեմ մղվող պայքարը և այլն: Զեր դա ըստ եյության հանդիսանում ե նյութական բազա՝ կոլտնտեսության մեջ կոնջ դեկավար գերբ բարձրացնելու համար: Առանց դրան բոլոր խնդիրները կմնան թղթի վրա: Մինչդեռ մի շաբաթ վաստեր ցույց են տալիս, վոր տեղերը դեռ պատշաճ ուշադրություն չեն նվիրում այդ հարցերին: Բորչաւլ վում, կարացաղում, Գարենա ախեթի այդ ամսություն (Վրաստան) շրջանային կազմակերպությունները վոչ միայն աշխացություն չեն ցույց տվել մանկամասուրների կազմակերպմանը, այլև նպաստել են այդ մառւրների գույքի հափշտակմանը (յուրացվել են մանկական մահճակալներ, յերկաթե վառարաններ և այլն): Շամիորի շըջանում մառւրների կահավորումը (մոտ հազար զույգ մանկական սպիտակեղեն, մահճակալներ ու սեղաններ) հաշվշակիվելու փչացվել են: Նախիջևանում, Նորաշենի շըջանում, մանկամասուրներին հատկացված մթերքները բաշխվել են կոլտնտվարչությունների անդամների միջն, իսկ ինվենտարը մնացել է առանց ոգտագործելու: Մեզ մոտ հանրային սնունդը դաշտերում շատ թույլ ե զարգացել և միմիայն իր ընտանիքի համար անհատապես սնունդ պատրաստելը մինչև այժմ ել վորպես ամենածանր բեռ ընկած ե կոլտնտեսուհու ուսերին և այլն:

Անհրաժեշտ է անհապաղ բեկում ստեղծել այդ բոլոր հարցերում: Դրանց լուծմանը պետք ե ձեռնամուխ լինեն իրենք շրբնակոմները, շրջգործկոմները, կուսկոմիտեները և վոչ թե թողնեն միմիայն կանանց սեկտորների ձեռքին, թե՝ «թող կառավարվեն, ինչպես կարող են»: Ամբողջ կուսկոմակերպությունը, կոմյերիտմիությունը, խորհուրդները անհապաղ պետք ե մեծ բարձրության վրա դնեն կոլտուրական-կենցաղային սպասարկումը մեր գյուղում:

ե) Մշակման ու քաղհանի կամպանիայի ընթացքում պետք

և սկսել համարձակություն առաջ քաշել լավագույն հարցածային կանանց՝ կողմանառներում, խորհուրդներում, շրջանում մարտական զեկավար աշխատանք կատարելու համար: Պետք ե սկսել լայն չափով ուղարկել առաջավոր կողմանառներին կողմանառնեական կադրերի զանազան դասընթացները:

զ) Պետք ե ներգրավել կանանց ընդհանուր մասսայականաքառագական ամբողջ աշխատանքին և անը ավարար համարել այն ժողովը, արտադրական այն խորհրդակցությունը, հավաքը և այլն, վորտեղ կանայք պատշաճ մասնակցություն չեն ցուցաբերել:

Յեվ այդ ամբողջ աշխատանքը պետք ե կատարել վոչ թե նեղ, ապարատային յեղանակով, վոչ թե գրասենյակային, բյուրոկրատիկ մեթոդներով, այլ համարձակորեն ու վճռաբար, հասարակական լայն բնույթ տալով նրան: Հեղափոխության ընթացքում կինը բազմիցս ցույց է տվել հերոսության լավագույն որինակներ: Յեվ մենք համոզված ենք, վոր այժմ, յերբ կանանց մեջ կատարվող աշխատանքը կանգնած է վիթխարի տեղաշարժերի առաջ, կգտնվեն հարյուրավոր ու հազարավոր ակտիվ կանայք, վորոնք հերոսաբար, հեղափոխական մարտիկների պաֆոսով կմարտնչեն այդ ասպարեզում կանգնած վիթխարի խնդիրների իրականացման համար: Առաջին հերթին այդ պահանջում ենք կուսակցության անդամ կանանցից, կոմյերթիտունիներից: Մենք նրանցից ամեն մեկին ասում ենք՝ չի կարելի հեռու մնալ այդ մեծ աշխատանքից, բոլորդ ել զիստվին, բնացեք պայքարի ընդհանուր ճակատը, կարողացեք շաղկապել այն ճեր մյուս բոլոր խնդիրների և աշխատանքների հետ: Յեվ ահա, յեթե մենք բոլորս ել համեմաշխարեն, համախմբված կերպով, ընդհանուր ճակատով ձեռնամուխ լինենք այդ աշխատանքին, վերջինս արագորեն կհասցնենք այն բարձրությանը, վոր անհրաժեշտ ե այժմ, նոր պայմաններում: (Յերկարագու ծափեր):



ՀՀ Ազգային գրադարան



29.9.65

ԳԵՎԸ 15 ԿՈՊ.



М Е Е Р З О Н

Новая обстановка в деревне и задачи
работы среди женщин

Партиздан 1933 Эривань